

ԻՐԱՆ ԿԸ ՅԵՐՔԷ, ԹԵ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԵՋ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԴԵՄՈՔՐԱՏԻԿԱԿԱՆ ԱՎԱՆԱԳՐՈՒՄԻՆ ՅԵՏ ԿԱՊ ՈՒՆԻ

Իրան կը հերքէ, թէ որեւէ կապ ունի Արժանթինի մէջ իսրայէլեան դեսպանատան ականահարուստի հետ (1994ին), որ խլած էր 85 Կո՛հ:

Երեքշաբթի օր, արժանթինեան իշխանութիւնները այս արարքին ետին կը տեսնէին Իրանը եւ Հրպայիլան (Իսրայէլ եւ Միացեալ Նահանգներ ատաքին իսկ օրէն նոյնը կ'ըսեն), ինչպէս նաեւ Ինքըրփոյէն կը պահանջէին Հրպայիլայի եւ անոր դեկավարին՝ շէյխ Հասան Նասրալայի մասին մանրամասն տեղեկագիր մը:

Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Համիտ Ռեյսա Անէֆի «անհիմն ամբաստանութիւններ» որակեց արժանթինեան իշխանութեան յայտարարութիւնները:

(ՌՈՅԹԸՐՁ)

ԼԻԲԱՆԱՆԸ ՄԵԿ ԸՆՏՐԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ԵՒ ԾԵՐԱՎՈՅՏԻ ԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԸ ԿԸ ԳՐԱՒԵՆ ԼՈՒՍԱՐՉԱԿՆԵՐԸ

Խորհրդարանի երէկուան ընթացիկ հանդիպումին քննարկուեցան հիմնական երկու հարցեր. ընտրական նոր օրէնքի ծիրէն ներս Լիբանանը մէկ ընտրաշրջանի վերածելու թղթածրարը եւ Ծերակոյտի դրուժիւնն ճաստատելու առաջարկը:

Պրորի յայտնեց, որ ընտրական նոր օրէնքի հարցը մանրամասնօրէն պիտի քննարկուի խորհրդարանին կողմէ, իսկ Ծերակոյտի հարցին ակնարկելով նկատել տուաւ, որ անիկ կրնայ երաշխիք ըլլալ համայնքներու միջեւ ճակատագրական հարցերու լուծման:

Լիբանանը մէկ ընտրաշրջանի վերածելու հաւանականութեան մասին Պրորի յայտնեց, որ համայնքային լարուածութիւնը կը նուազի այդ տնօրինումով:

Միւս կողմէ, երէկ Պրորի ստացաւ երեսփոխան Կարիէլ Մըրի յղած երկու հաստատագիրները, որոնց մէջ նա տեղեկ կը պահէ իր ունեցուածքին մասին:

ՄԱՐՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ԿԱՐԾՐՈՃՈՎ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մարոնի Եպիսկոպոսներու Խորհուրդը երէկ Պրորի մէջ մարոնիներու Նասրալայ Պուժրոս Սֆէյրի գլխաւորութեամբ գումարեց ամսական իր հերթական նիստը, որուն ընթացքին քննարկեց երկրին ներկայ իրավիճակը եւ վերջին իրադրութիւնները, ինչպէս նաեւ մարոնի եկեղեցիին աւնչուող հարցեր:

Նիստէն ետք խորհուրդը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը բաղկանայ հիմնական հինգ կէտերէ:

ա.- Լիբանանեան բեմը այսօր կ'ապրի զարմանալի իրադրութիւններ, յատկապէս ինչ կը վերաբերի պետական որոշումներու, որ «կարծէք» թիրախ կը դարձնէ քաղաքացիները: Իսկ գաղտնի իշխանութեան ներկայացուած կարգ մը թղթածրարներ մնացած են դարակներու մէջ եւ Սամանադրութեան իսկ չնորձած ազատութիւնները կ'ենթարկուին բռնութիւններու: Այս բոլոր հարցերով արդեօք կարելի է ֆրանսախոս երկրներու վեհաժողովը եւ «Փարիզ - 2»-ը կայացնել:

բ.- Այսօրուան դեկավարները արդեօք կը գիտակցին, թէ թերութիւնը օրէնքներու չզոյւլութեան մէջ չի կայանար, այլ դեկավարներուն կողմէ այդ օրէնքներուն անտեսման մէջ:

գ.- Դեկավարները տեղեկ են, որ եթէ ընդդիմադիրներուն ձայնը ինքզինքով եւ անոնց վրայ ճնշում բանեցնելով ոտնակոխած կ'ըլլան Լիբանանի պարծանքը՝ ժողովրդավարական վարչակարգը: Իսկ ամբողջ Լիբանանը մէկ ընտրաշրջանի վերածելու օրէնքը, կը կարծէք, որ առիթ կու տայ քաղաքացիներուն՝ լաւ ձեռով ներկայացուելու, թէ ոչ բոլոր թեկնածուները օրպայիս բարձրանալու փոխարէն պիտի բարձրանան շոգեկառք:

դ.- Լիբանանցիները չեն անդրադառնար, որ ներկայ շրջանային կացութիւնը ապացոյց մըն է երկիրներին մէջ կուտակուած սեւ ամպերու կոյտի մը, որուն առաջը կ'առնուի միայն «սրտերու լուացում»ով եւ ոչ թէ զիրար խճրճելով:

ե.- Աստուածածնայ նուիրուած այս ամսուան ընթացքին Աստուած մէ եւ Ս. Թերեզայէն կը խնդրենք, որ իրենց օրհնութիւնները շնորհեն մեզի եւ մեր սիրտերը լուան առելութեան, որպէսզի կարելի դառնայ ազգային շարքերը խտացնել եւ պաշտպանել Լիբանանի արժանապատուութիւնը եւ պետութեան գերիշխանութիւնն ու անկախութիւնը:

ՈՒՄԻՆԿԹԸՆ ԱՆԵՂՈՒՐԾԵԼԻ ՊԱՏԱՆՆԵՐ ԿԸ ՀԱՍՏԱՏԵ

Մինչ իրաք կը պատրաստուի վերընդունելու ՄԱԿի քննիչները, Միացեալ Նահանգներ բանաձեւի նոր առաջարկ մը կը ներկայացնէ Ապահովութեան Խորհուրդին խիստ ու գրեթէ անհանդուրժելի պայմաններ հաստատելով գէնքի քննութիւններուն վերսկսելու գործընթացին շուրջ: Բանաձեւի նախագիծը, որ կը վայելէ Բրիտանիոյ զօրակցութիւնը, տակաւին չէ յաջողած ապահովել Ապահովութեան Խորհուրդի մնայուն անդամ

«Ա. ԻՆՖՕ» ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵ ԻՐ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ, ՀԱԿԱՌԱԿ ՎՐԱՅԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՐՔՈՒՄԻՆ

Հոկտեմբեր 1ին վրացական իշխանութիւնները հերքեցին նոյն օրը «Ա. ԻՆՖՕ» լրատու գործակալութեան հարցումը, թէ Փանքիսի կիրճէն չեզնիս զինեալներ սկսած են ուղղուել զէպի վրաստանի Ջաւախք նահանգը: Վրացական «Փրայմ - Նիուզ» լրատու գործակալութիւնը հաղորդած է, որ Ջաւախքի մէջ վրաստանի նախագահի լիազօր ներկայացուցիչ Թէյմուրազ Մոսիաշվիլի հերքելով չեզնիս զինեալներու թուրքիա անցնելու հաւանականութեան մասին տեղեկութիւնները, յայտնած է, թէ «նման բան բացառուած է, որովհետեւ շրջանին մէջ հաստատուած վրացական սահմանապահ ուժերը լաւ ձեռով կը գործեն եւ զինուած ուժերու տեղաշարժ չէ նկատուած»:

Շարք՝ էջ 10

ՊԱՂՏԱՏ ԿԸ ՄԵՐԺԵ ԵՒ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԿԸ ՆԿԱՏԵ ՄԱԿԻ ՈՐԵԷ ԵՒ ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԹԱՐԷՔ ԱՁԻՁ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՄԷՁ

Իրաք երէկ դատապարտեց գէնքի քննութիւններուն առնչուող ՄԱԿի խիստ բանաձեւի մը ամերիկեան առաջարկը, մինչ ամբողջ աշխարհը «չունչը բռնած» կը հետեւի իրադարձութիւններուն, որոնք կրնան պատերազմով մը եզրափակուի:

Իրաքի փոխ վարչապետ Թարէք Ազիզ Թուրքիոյ մէջ յայտարարեց, որ Պաղտատ կը մերժէ ու անընդունելի կը նկատէ ՄԱԿի որեւէ նոր որոշում, որ կ'առնչուի գէնքի քննութիւններուն: Ազիզ աւելցուց, որ իրաք պիտի հակադարձ ամերիկեան որեւէ յարձակումի, որուն թիրախը իրաքեան հողերը պիտի ըլլան: Ազիզ շեշտեց, որ պատերազմի պարագային, իրաք վնասներ պիտի կրէ, սակայն անոր աւարտին, թշնամին հասած պիտի չըլլայ իր նպատակին: Իրաքի պաշտօնատարր փորձեց նաեւ փարատել Թուրքիոյ մտավախութիւնները, յայտարարելով, որ Պաղտատ ամերիկեան յարձակումին պիտի չհակադարձէ զբացի երկիրներու վրայ յարձակելով:



Թարէք Ազիզ

Ֆրանսայի, Ռուսիոյ եւ շարժուան վերջաւորութեան: Ուաշինգթոն մինչ թիւնը: Նախագիծը Ապահովութեան Խորհուրդին պիտի ներկայացուի այս Ծարք՝ էջ 10

Ազիզի յայտարարութեան մէջ օր առաջ ՄԱԿի եւ իրաքի պաշտօնատարներ Վիեննայի մէջ համաձայնութիւն մը գոյացուցած էին գէնքի քննութիւնները վերսկսելու մանրամասնութիւններուն մասին: Ազիզ ըսաւ, որ քննութիւններուն մասին ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին կողմէ ցարդ որոշուած որոշումները բաւարար են եւ կարիք չկայ նորերու:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՒՆԵՑԱԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՀԵՏ




Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ Պաղտատի պալատին մէջ ընդունեց երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանը, որ շնորհակալութիւն յայտնեց նախագահին՝ «Աղբալեան - Հ.Մ.Լ.Մ.» մարզամշակութային համալիրին բացման հանդիսութեան հովանաւորութեան համար:

Հանդիպումին քննարկուեցան նաեւ Տրպայայի մէջ նախարարութեան նախաձեռնութեամբ կառուցուող մարզական համալիրին մանրամասնութիւնները: Համալիրը պիտի կոչուի նախագահ Լահուտի անունով, իսկ համալիրին հիմնարկէք պիտի կատարուի երեք շաբաթ ետք:

Նախարար Յովնանեան նախագահ Լահուտի փոխանցեց նաեւ, թէ Ֆրանսախոս երկիրներու վեհաժողովին ետք պիտի այցելէ իրաք, ուր իր մարզին յատուկ համաձայնադրներ պիտի կնքէ համապատասխան մարմիններու հետ:

ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԻԹՈՎ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԸ ԿԸ ՄՆԱՅ ՊԱՏՆԵՇԻՆ ՎՐԱՅ



Վերամուտ է. արդէն իսկ դպրոցներուն դռները լայն բացուած են աշակերտներուն հոսքին դիմաց, իսկ պատուհաններէն դուրս կը յորդի ուրախ աշակերտներու աղմուկը:

Դպրոցական տագնապին ծանօթ թղթածրարը հրատարակեց մը վերածած արձակուրդէ մը ետք, հայկական վարժարանները այս տարի եւս կու գան իրենց

Շարք՝ էջ 3

Հ. Յ. Դ. ԿԸ ՄԵՐՏԱՅՆԵ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԵՏ

Երէկ Քիւն մեկնեցաւ Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի պատուիրակութիւնը՝ հանդիպումներ ունենալու համար Ուքրանիոյ Ընկերվար-Ժողովրդավար (միացեալ) կուսակցութեան ղեկավարութեան հետ:

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի պատուիրակութիւնը կազմուած է ՀԳՄ-ի քաղաքական ներկայացուցիչ ընկ. Արմէն Ռուստամեանէ եւ ՀԳՄ անդամ ընկ. Էդիկ Ղազարեանէ: Պատուիրակութեան կ'ընկերակցի Հ. Յ. Դ. Բիւրոյի Մոսկուայի գրասենեակի պատասխանատու ընկ. Մէլրայն Բաղդասարեան:

Հ. Յ. Դ. պատուիրակութիւնը հանդիպումներ պիտի ունենայ Ուքրանիոյ Ընկերվար-Ժողովրդավար (միացեալ) կուսակցութեան ղեկավար, Ուքրանիոյ նախագահի աշխատակազմի ղեկավար Վլատիմիր Մեդվեդչուկի եւ այլ պատասխանատուներու հետ: Քննարկուելիք զլխաւոր հարցը երկու կուսակցութիւններուն միջեւ երեւանի մէջ ստորագրուելիք համագործակցութեան պայմանագիրն է: Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինը համագործակցութեան այսպիսի պայմանագրեր ստորագրած է նաեւ Ռուսաստանի Պետդուժայի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Տմիթրի Ռուդկոյի գլխաւորած «Ռուսական Համայնքների Քոնկրէտի» եւ Վրաստանի խորհրդարանի փոխ նախագահ Վասիլ Մեդվեդչուկի ղեկավարած Ընկերվարական կուսակցութեան հետ:

Երկօրեայ այցելութեան ընթացքին, Հ. Յ. Դ. պատուիրակութիւնը Քիւնի մէջ հանդիպումներ պիտի ունենայ նաեւ Ուքրանիոյ պետական եւ քաղաքական տարբեր շրջանակներու, ինչպէս նաեւ հայ համայնքի ներկայացուցիչներու հետ:

ԳԵՐՄԱՆՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԵ ԸՆԿ. ՀՐԱՆԳ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԻՆ

2 Հոկտեմբերին, Գերմանիոյ Ընկերվար Ժողովրդավար կուսակցութեան ղեկավար, Գերմանիոյ վարժար՝ էջ 10

ԱԿԱՐԿ ՆԻՒԹԱԿԱՆԵՆ ԱՆԳԻՆ ԵՒ ԱՆԿԵ ՎԵՐ

Անցնող Կիրակի գիշեր «Ֆենիսիա» պանդոկի սրահին մէջ կատարուած հանգանակութեան արդիւնքին յայտարարութիւնը տեղի կու տայ պանսպան մտածումներու:

«Ապրակ» տակաւին այցեալ Ուրբաթ յատուկ յաւելումով իր ընթերցողներուն եւ ընդհանրապէս լիբանանահայ գաղութին ծանօթացուց «Աղբալեան - Հ. Մ. Լ. Մ.» մարզամշակութային համալիրին կառուցը, անոր կապուած աշխատանքային ծրարները, բայց մանաւանդ՝ հեռանկարային առումով անոր ներկայացուցած կարեւորութիւնը:

«Ֆենիսիա»ի ներկաները փաստեցին, որ յաւելեալ ծանուցումային ձիգ պէտք չէր կեդրոնին համար նուիրատուներ ապահովելու եւ անոնց ծամբով իր լրումին հասցընելու համար համալիրին շինարարական աշխատանքները:

«Ֆենիսիա»ի արդիւնքը եկաւ անգամ մը եւս փաստելու, որ ոչ տնտեսական եւ ոչ այլ տեսակի դժուարութիւններ կրնան խնչընդոտել առաջընթացը աշխատանք մը, եթէ կայ աշխատանքը ամէն գնով յաջողցնելու վճռակամութիւնն ու նուիրումը:

«Ֆենիսիա»ի ձեռնարկին ընթացքին հանգանակուած ուր հարիւր յիսուն հազար ամերիկեան տոյարի գոյացումը պարպապէս ցուցանիչներէն մէկն է այս գաղութին տածած վստահութեան՝ հանդէպ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ իր ուղեկից միութեան՝ Հ. Մ. Լ. Մ. Ի.:

Քաղաքական արգելքներ չկրցան տարանցուել լիբանանահայ գաղութ - Դաշնակցութիւն մէկուրիւնը: Քաղաքացիական պատերազմը աւելի միակամեց ժողովուրդ - կուսակցութիւն կապը: Կիրակի օրուայ յաջողութիւնը եկաւ անգամ մը եւս ընդգծելու, որ տնտեսական խոր տագնապը չկրցան նոյնիսկ ստուեր ձգել մեր կուսակցութեան հանդէպ այս գաղութին տածած վստահութեան իրողական փաստին վրայ:

Թուանշանները կամ գումարին չափը ցուցանիչ չեն յաջողութեան: Յաջողութիւնը վստահելիութեան, առ այդ՝ անսակարկ ու անվերապահ նուիրելու աքթին մէջ է, որ նիւթական անդին եւ անկէ վեր բարոյական իմաստ ու խորութիւն, եւ որ ընդմիջու կը շարունակէ դրոշմուած մնալ մեր ժողովուրդին հաւաքական գիտակցութեան ու ներաշխարհին մէջ:

«Ա.»

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՆԵՊԻՉ ՊԵՐՐԻԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ՎԵՐՁԻՆ ԻՐԱԿԱՆԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՅԻՆ



Նախագահ զոր. Իմիլ Լահուտ երկ կապակահան պալատին մէջ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիչ Պերրիին, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային իրադարձութիւնները:

Հանդիպումին ետք, Պերրի յայտնեց, որ նախագահ Լահուտի փոխանցած է Աւստրիա կատարած իր պաշտօնական այցելութեան արդիւնքները: Փոխադարձաբար նախագահ Լահուտ Պերրիի պարզեց եմէն եւ Օման կատարած իր պաշտօնական այցելութիւններուն արդիւնքները:

Հանդիպումին քննարկուեցան հարաւ մէջ իսրայէլեան ոտնձգութիւններու հետեւանքները, յատկապէս Ուզբեկիստանի ծրագրի աւարտէն ետք:

Քննարկուի առաւելագոյն դարձան նաեւ լիբանանեան ներքին քաղաքական կեցուածքները եւ շեշտուեցաւ, որ նախագահ Լահուտի նախաձեռնութեամբ սկսած երկխոսութիւնը չէ աւարտած եւ ինք նախագահ Լահուտ վերջ չէ տուած այդ երկխոսութեան հովանաւորութեան:

Պերրի նախագահ Լահուտի փոխանցեց նաեւ, որ յառաջիկայ Երեւանի օր պաշտօնական այցելութեամբ մը պիտի մեկնի Ֆրանսա, ընդառաջելով Ֆրանսացի իր պաշտօնակիցին հրահրին:

Միւս կողմէ, Պապատայի պալատին «Հիւրերը» դարձան նաեւ ընդհանուր դատարար Ատան Ատտոմ եւ պետութեան ապահովութեան ընդհանուր տնօրէն զոր. Էտուար Մանսուր:

Նախագահ Լահուտ երկ կողմէ երկու հեռագրեր, որոնցմէ մէկը Չինաստանի նախագահ Ճիանկ Մեմի-նի շնորհակտորելու Չինաստանի ազգային տօնը, իսկ միւսը՝ Կիպրոսի նախագահ Կլաֆթոս Բլիքիտէսի, շնորհակտորելու Կիպրոսի անկախութեան տօնը:

ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԱՌԻԹ
ԱՅՏԻԼ իրազգուրեան սնտուկը կարիքը ունի ներկայացուցիչներու: Թեկնածուները կրնան ներկայանալ ԱՅՏԻԼի գրասենեակ ԱՅՏԻՏ շէնք Բ. յարկ, ամէն օր առաւօտեան ժամը 8:30Է կտօրէ ետք ժամը 4:30:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱՒՈՐ ՎԵՐԱՍՈՒՏ
Համազգայինի «Գայիան» պարտուստի դարձող 2002 - 2003 տարեշրջանի վերամուտը պիտի սկսի հետեւեալ ժամանակացոյցով:
Ա. 4րդ դասարան, Ուրբաթ, 4 Նոյեմբեր 2002, երեկոյեան ժամը 6:00ին:
Բ. Նորեկ աշակերտութեան համար (6 տարեկան եւ վեր) Ծաբաթ, 5 Նոյեմբեր 2002, կտօրէ առաջ ժամը 11:00ին:
Գ. Սնացեալ բոլոր դասարանները, Ծաբաթ 5 Նոյեմբեր, կտօրուան ժամը 12:00ին:
Պարտուստի ֆելեթ 3ԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԵՆԱՆՈՒԹ. «Սոն» սրահին մէջ 2002 թուականի «Ընար» պարախումբին եւ «Գայիան» դարձող պարախումբին նշաններու վիտե - երկրները եւ լուսանկարները կարելի է ստանալ միաւորի վարչութեան:
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱՒՈՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԶԳ
Տիրա Սեդրակ Էքիզեան եւ զաւակուներ Տէր եւ տիկին Յովհաննէս Տեմիրճեան եւ զաւակուներ Տիկին Արաքսի Տեմիրճեան
Տէր եւ տիկին Գեորգ Օհանեան եւ զաւակուներ Տէր եւ տիկին Գեորգ Սանդուրեան եւ զաւակուներ Տէր եւ տիկին Մհեր Տեմիրճեան
Տէր եւ տիկին Գօգո Պէքարեան եւ զաւակուներ Տէր եւ տիկին Գարո Գարրիէլեան եւ զաւակուներ Տէր եւ տիկին Յարութիւն Տեմիրճեան եւ զաւակուներ եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, զաւակին, քրոջ եւ հարազատին

ԵՍԹԵՐ ԷԶԷՆՃԵԱՆԻ (Ծնեալ 1964ին)
մահը, որ պատահեցաւ Երեւանի, 1 Հոկտեմբեր 2002ին, անարգ ոճի պատճառով:
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 2 Հոկտեմբեր 2002ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Սրբոյ Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:
• Ներկայ ընդունիլ իրեն մահապղ:
• Ցաւակուցիչները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Պուրճ Համուտ, Կարին 25նք, թի 2:

ԺՈՍՊԼԱԹ ԵՒ ՊՈՒԷՅՁ ԸԱՄԱԿԱՐԾԻՔ ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸԱՐՑԵՐՈՒ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ

Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար Երեսփոխան Ուլիտ Ժոնյաթ երկ կողմէն նախաձեռնեց նախաձեռնարար երեսփոխան Յարա Պուէյվը, ներկայութեամբ՝ գաղթականներու հարցերու նախարար Մարուան Համատէի եւ Երեսփոխան Ապպա Հաշմի:
Հանդիպումին քննարկուեցան շրջանային հարցեր, ինչպէս նաեւ լիբանանեան բերք յուրոյ հարցեր եւ իրաքի դէմ տեղիկեան սպառնալիքներուն ունենալիք ժխտական պաշտօնութիւնները պաշտօնիւնեան հարցին եւ ամբողջ արաբական աշխարհին վրայ:
Պուէյվ յայտնեց, որ Ժոնյաթի հետ միասնաբար կը բաժնէ շրջանային կայունութեան սպառնացող արաբներու մտահոգութիւնը, շեշտելով, որ պէտք է լիբանանեան բեմին համար ստեղծել հարկ եղած դիմադրողականութիւնը, որ պիտի մարմնաւորուի ընդհանուր ժողովրդի - պետութիւն «կրակմարի» դրութեամբ, ինչպէս նաեւ Սուրիոյ հետ յարաբերութիւնները աւելի եւս ամրապնդելու ուղղութեամբ առնուելիք քայլերով:

Պուէյվ նշեց, որ Քըրդէք Շահուանի հանդիպումը շատ սխալներ գործեց իր եւ ուրիշներուն հաշտուի, սակայն անընդունելի է, որ այդ սխալներուն պատասխանատուութիւնը կրէ մէկ համայնք, որովհետեւ Քըրդէք Շահուանի հանդիպումը որեւէ առեւ Լիբանանի բոլոր քրիստոնէաները չէ ներկայացուցած, հետեւաբար ան կողմէն նախաձեռնարար ան ուղղեց գիտակցութեամբ սրբագրելու այդ սխալները, որովհետեւ շրջանային կայունութիւնը կը պարտադրէ այդ ձեւի լուծման որդեգրումը:
Ժոնյաթ իր կարգին յայտնեց, որ կը բաժնէ Պուէյվի տեղական եւ շրջանային հարցերու վերաբերեալ «հայեացքը», իսկ ծերակուտական խորհուրդի մը դրութեան հաստատման եւ Լիբանանը մէկ ընտրանքի վերածելու հարցով ան խնդրեց յայտնել ժամանակ լրջօրէն մտածելու անոնց մասին:

ՀԱՐԻՐԻԻ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԵՒ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի Քըրալթէմի մէջ երկ կողմէն Լիբանանի մէջ Եգիպտոսի նոր դեսպան Հիւսէյն Տարաբուրուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային կացութիւնը:
Հարիրի այցելեց նաեւ Լիբանանի մէջ իրանի դեսպան Մեսուտ Իտիքի: Քննարկուեցան Լիբանան - Իրան երկկողմանի յարաբերութիւնները եւ զանոնք բարելաւելու հեռանկարները յատկապէս տնտեսական մարզին մէջ: Քննարկուածի առարկայ դարձաւ նաեւ Իրանի դէմ ամերիկեան սպառնալիքներու արշաւը:
Վարչապետ Հարիրի ընդունեց կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Ապտէլ Ռահիմ Մարտը, որուն հետ քննարկեց նախարարութեան առնչուող հարցերը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱԿ
Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Ըրմանրկի դասընթացները կը սկսին Երկուշաբթի, 7 Նոյեմբերին: Դասաւանդութիւնները կ'երկարին Երկուշաբթի Ուրբաթ, ժամը 1:30Է 6:00:
Ստորեւ 2002 - 2003 ուսումնական տարեշրջանի Ա. կիսամեակի դասանիթերը.
1. Ժամանակակից Հայոց լեզու I, II եւ III
2. Հայոց լեզուի դասաւանդում մեթոտիկա
3. Բնական Հայոց Պատմութիւն I, II եւ III
4. Հայոց Պատմութեան աղբիւրագիտութիւն
5. Հայ արդի գրականութեան պատմութիւն
6. Սփիւռքահայ գրականութիւն
7. Մատենագրութիւն
8. Աշխարհագրութիւն Պատմական Հայաստանի
9. Հայ հոգեւոր եւ կրօնական հիմ գրականութիւն
10. Գրաբար I, II
11. Հայ ժողովուրդի բանահիւսութիւն
12. Ներածութիւն լեզուաբանութեան
13. Հին յունական գրականութիւն
14. Հին հռոմեական գրականութիւն
15. Ընդհանուր հոգեբանութիւն
16. Ներածութիւն մանկավարժութեան
17. Մանկավարժութիւն - Հոգեբանութիւն
18. Գործնական մանկավարժութիւն
19. Հայ մշակոյթ I (մանրանկարչութիւն - կերպարուեստ)
20. Ժամանակակից Հայոց Պատմութիւն 3 (Օսմանեան կայսրութիւն)
21. Ընդհանուր պատմութիւն I (Հին Արեւելք, Յունաստան)
22. Ընդհանուր Պատմութիւն II (Հռոմ)
Առիթ պիտի ընծայուի մասնաւոր ուսանողներու, որոնք յատուկ մասնաշրջաններու վրայ ուզեն ընտրուի հետեւի յիշեալ դասանիթերն մէկ մասին, ստանալով հիմնարկի համապատասխան վկայագիր:
Շտապըրբողները կրնան անձամբ դիմել հիմնարկի գրասենեակ՝ առաւօտեան ժամը 10:00Է, 6:00 եւ կամ հեռաձայնի 01 - 375410 , 03 - 429685 թիւերուն:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՄԻՕՐԵԱՅ ՇՐՋԱՊՏՈՅՏ
Դեպի Դամասկոս, Սետնայա, Մաալուլա գին միայն 13 տոլար: Արձանագրութիւն Աշճեան Թուրգ. հեռաձայն 01-240654, 261177 եւ 03- 233978:

PHOTO NERSES
ԱՐԱԳ ՍՊԱՆԱԿՈՒԹԻՒՆ - ՈՐԱԿԱՌՈՐ ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐ
Չոր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէ նոր հասած ԱՐԱԿԱՆ DIGITAL ձեռնարկի միջոցով որակաւոր եւ գաւազան լայնորով:
Ստանձնում՝ 20 վայրկեանէն:
Լուսանկարները կ'արձանագրենք CD-ի կամ FLOPPY տիպիներու վրայ:
Cameraներու ճիշտ հաւաքածոյ, ալպանք եւ նկարի շրջանակներու ընտիր տեսակաճի:
Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն զինքով:
Պուրճ Համուտ. Զաղաքապետարանի փողոց. «Սանթր Արմ»-ի դիմաց. Հեռ: 01-261858 եւ 01-255992

ՍՊԱՅԻՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԴԻՍՈՒՍՆԵՐԸ՝ 30 ՍԵՊՏԵՄԲԵՐԷՆ 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ
Հայկական Երեսփոխանական գրասենեակը կը տեղեկացնէ, թէ պաշտօնականութեան նախարարութիւնը կը յայտարարէ, որ կարիքը ունի ուսանողներու՝ օղային, ծովային եւ ցամաքային ջրկատններու համար սպաններ պատրաստելու նպատակով:
Հետեւաբար, բանակի հրամանատարութիւնը կը կ'ուղղէ բոլոր այն քաղաքացիներուն եւ բանակայիններուն, որոնք պետական պաշարօրէյի վկայական ստացած են եւ յաջողած՝ առնուապէս 12/20 միջինով, եւ կամ այս վերջինին համապօր վկայական մը ունին, դիմելու Սպայից վարժարան՝ 30 Սեպտեմբերէն մինչեւ 26 Հոկտեմբեր 2002:
Հայ քաղաքացիները, որոնք հետաքրքրուած են կրնան դիմել հայկական Երեսփոխանական գրասենեակ, Շաղկոյեան կեդրոն, Պուրճ Համուտ:
«ԱՐՁԱՍԱՐ» ՏՆԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄԲ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԵՐ
Ձեր ձեռնարկը պաշարին համար պահանջեցէ LOUJI «Արթամար» պահածոները, պատրաստուած առանց քիմիական նիւթերու եւ արեւու բնական ջերմութեամբ՝ ծիրանի, թուզի, բալի (վայրի կեռաս), ցարինջի, դոնուի եւ սերկեւիկի անուշներ, կարմիր պղպեղի (փոշի եւ ջուր), անանուխի փոշի, թրուանդի ու լոլիկի պահածոներ, եւ այլն:
Փնտնեցէ Spinney sh, St. Elieh, Marche Sako (Չալքա), Makhlov (Տորա), համեմատականներ՝ Ներսէսի, Cafe Garof սոս (Պուրճ Համուտ), ինչպէս նաեւ Փուռ Իշխանեան (Չոքաք Էլ Պլաթ) եւ LOUJI «Ա. Պուլլուրճեան» ընկերաբժշկական կեդրոն, 4րդ յարկ:
Այս վաճառքէն գոյացած գումարները կը ծառայեն LOUJI կրթական - ընկերային ու առողջապահական նպատակներուն:
LOUJI ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԹՈՐՈՍ ԱՌՍԼԻՆ» ԿԵՐԱՍՈՒՏԻ ՎՊՐՈՅ
ՎԵՐԱՍՈՒՏ 2002 - 2003
• Արձանագրութիւնները տեղի կ'ունենան Ա. 3, 4, 7, 8 Նոյեմբեր, երեկոյեան ժամը 4:00Է 6:00, Համազգայինի «Լեւոն Ծանթ» կեդրոն: Հեռ. 01/265899 եւ 01/249375
Բ. Նշան Փալանճեան ճեմարան, 10 եւ 11 Նոյեմբեր, երեկոյեան ժամը 4:00Է 6:00:
• Դասաւանդութիւնները կը սկսին Ուրբաթ, 18 Նոյեմբեր, երեկոյեան ժամը 4:00 - 6:00, Նշան Փալանճեան ճեմարան, Չոքաք Էլ Պլաթ: Հեռ. 01/375411:
ԵՆԱՆՈՒԹ. Աշակերտութեան երթուղարձը «Լեւոն Ծանթ» կեդրոնէն դէպի Նշան Փալանճեան ճեմարան ապահովուած է:

ՎԵՐԱՍՈՒՏ ԲԱՐԸՍԱՍԱՌՈՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ
Պուրճ Համուտ, հեռ. 260533 - 260534 - 266822
1.- 2002 - 2003 տարեշրջանի արձանագրութիւնները նախկին եւ նորեկ աշակերտներու համար սկսած են եւ կը շարունակուին հաստատութեան գրասենեակին մէջ:
2.- Նորեկ աշակերտներ, որոնք սովորական վարժարաններու մէջ կարող չեն իրենց դասերուն հետ քայլ պահել, եւ սորվելու տկարութիւն եւ կամ դժուարութիւն կ'ունենան, կրնան արձանագրութեան դիմում կատարել եւ ընդունուիլ, յետ հոգեբանական եւ մանկավարժական ընթացիւններու, որոնք ճիշդաբար կը կատարուին հաստատութեան մէջ:
3.- Հայ վարժարաններու աշակերտներ, որոնք լեզուական, հոգեկան, մտային եւ ուսումնական դժուարութիւններ կ'արձանագրեն դպրոցական տարեշրջանին, կրնան նաեւ դիմել ԶԱԿԼ, որպէսզի յարմար եւ մասնագիտական լուծում մը տրուի իրենց հարցերուն:
4.- Օրոքայի սպասարկութիւնը ապահովուած է բոլոր շրջաններուն համար:
5.- Վերամուտ: Դասաւանդութիւնները կը սկսին Հիմնաքի, 3 Նոյեմբեր 2002, առաւօտեան ժամը 8:00ին:
ԲԱՐԸՍԱՍԱՌՈՐԻՒՆ

Under the patronage of H.E. Mr. Areg Hovhannissian Ambassador of Armenia
On the occasion of the National Day of the Republic of Armenia
M. Hratch Nalbandian Requests your presence at The opening of the first exhibition "Expression of Armenian fine Arts"
To be held on Thursday October 3, at 19.00 At the Loufich G. Nalbandian & Fils-The Gallery, Sodoco, Independence street. Tel.01-614345 & 03-655969
Wood & stone sculptures with fine Arminian rugs will be on exhibit till the 12th of October

www.mesrobian.com

Արևմտաօտարերկրացիներ
և արևմտաօտարերկրացիներ

260504

JEWELRY Design

DIAMOND Setting

WAX Molding

GEMOLOGY

HAIR STYLING

MAKE UP

Վարձատրվում են
միջև կո գիտնականի
վկայական վարձատրվում
եւս անվան

Tele-Video & Radio Repair

Car Electricity & Electronics

COMPUTER

Software & Hardware + INTERNET

Խիստ մասշտաբային կրթական

English For International Business

TOEFL - Cambridge University Certificate + 8 օտար լեզուներ

MESROBIAN TECHNICAL COLLEGE

Յացողություն 20 ամեայ փորձառություն

TICKETING IATA

Գործի բաց Անցագիր Ուղևոր Երկրորդ միջ

LCCIEB Business

Մասնագիտություններ վկայական՝ Լոնդոնում

B.T. Համալսարան

Գործ Երկու ընտրություններ մեկ վկայականով



ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂԵՐ

Հիբանանեան կեանքի երեւոյթներ

ՎԵՐԱՍՈՒՏ Է ԱՐԴԵՆ

ԴՊՐՈՑԻ ԶԱՆԳԻՆ ՀԵՏ ԿԸ ՀՆՉԷ ՆԱԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՐՑԵՐՈՒ ԱՀԱԶԱՆԳԸ

Գիրքերով ու տետրակներով լեցուն պայուսակներ, դպրոցական համագրքատներ հազած աշակերտներ, դասապահները զանգեր, գրախանութներէն վերադարձող եւ գիրքերով ու գրեկական պիտոյքներով ծանրաբեռնուած ծնողներ, դպրոցներու գրասենեակները խնդրած մայրեր ու հայրեր կը յուշեն, թէ արդէն վերամուտ է:

Այս շաբաթ Հիբանանի գրեթէ բոլոր դպրոցները կը բանան իրենց դռները՝ ընդունելու նոր եւ հին աշակերտներ: Արձանագրութիւն, մուտքի քննութիւններ կամ վերաքննութիւններ, փաստաթուղթեր, վկայականներ, արձանագրութեան գումարներ ու կրթաթղթեր կը կազմեն դպրոցներու եւ աշակերտներու այս օրերու գլխաւոր մտահոգութիւնը:

Ամբան շրջանին դպրոցն ու դպրոցական պարտաւորութիւնները մուտքած ծնողներ վերամուտի սեմին կը վերլուծեն, թէ պէտք է պահանջներ իրենց զաւակներուն կրթութիւնը եւ կը փութան դպրոց:

Գիրքերու անուանացանկը իրենց ձեռքին՝ ծնողները կը մտնեն մէկ գրախանութէն միւսը, իրենց գաւազներուն գիրքերը պահանջելու համար: Շատեր իրենց պայուսակին մէջ եղած դրամը բոլոր գիրքերուն բաւեցնելու համար կը փնտռեն գործածուած գիրքեր, որոնք նորին կէս գինը կրնան ըլլալ եւ որոշ չափով նուազեցնել ծախսը: Սակայն վերջին շրջանին, ճարպիկ քաղաքականութեան իրերէ արդիւնք, գրե-

մտնեն գրախանութները հարցնելով, թէ ի՞նչ գին կը վճարեն այս կամ այն գիրքին, եւ քանի մը գրատուն թափառելէ ետք անոնք կը վերադառնան այն գրախանութը, որ աւելի կը վճարէ: Սակայն այս իրավիճակը որոշ դասակարգի մը պատկանող ծնողներու կացութիւնն է, որովհետեւ ուրիշներ նոյնիսկ չեն հետաքրքրուիր այս հարցով:



Վերջին տարիներուն եւ յատկապէս պատերազմէն ետք, դպրոցներուն եւ աշակերտութեան կացութիւնը շատ փոխուած է: Նախապէս ծնողները, ի գին մեծ գոհոգութիւններու եւ գրկանքներու, ընտանիքին բոլոր զաւակներուն կ'ապահովէին երկրորդական կամ դէթ նախակրթարանի կրթութիւն: Այսօր կան քիչ թիւով ծնողներ, որոնք նոյն ձեւով կը շարունակեն, սակայն մեծամասնութիւնը կը նախընտրէ, որ ինք գոհուողը չըլլայ, այլ՝ դպրոցին ու պատասխանատուներուն գոհոգութեամբ կրթութիւն տայ իր զաւակներուն:

Վարժարաններու նոյն դռնէն ներս մտնող իւրաքանչիւր ծնող նոր պարագայ մըն է, նոր հարց մը ունի եւ նոր առաջարկներ ունի տնօրէնութեան: Նպատակը մէկ է՝ աշակերտը արձանագրել, սակայն պայմաններն ու հարցերը բոլորովին տարբեր են ու այլազան: Կան անհրաժեշտ փաստաթուղթեր կամ յարցումներ վկայագիր չունեցող աշակերտներ, ուրիշներ ունին վճարումի եւ կամ տարիներէ ի վեր դիմած պարտքերու հարց, այլ պարագաներ կը նախընտրեն ուրիշ վարժարան ուղարկել իրենց զաւակը՝ նուազ վճարումի եւ կամ իրենց համոզումով աւելի լաւ մակարդակի համար, եւ այլ: Հարցերը բարդ են ու դժուար, ասոնց վրայ կ'աւելնայ նաեւ այն իրողութիւնը, թէ իւրաքանչիւր ծնողը ունի իրեն յա-



թէ ամէն տարի գիրքերու նոր հրատարակութիւն մը լոյս կը տեսնէ եւ դպրոցները իրենց ցանկերուն մէջ կը նշեն, թէ կարելի չէ հինէն օգտուել: Այս պայմաններուն լոյսին տակ ծնողները կը ստիպուին մեծ գումարներ տրամադրել նորերուն համար: Կայ նաեւ հին գիրքերը գրախանութներուն վաճառելու գրութիւնը: Ծնողները գիրքերու պարկերով ծանրաբեռնուած կը



տուկ բացատրութեան ձեւը, պարագան ներկայացընելու եւ վերլուծելու ոճը, հարցերուն մօտենալու տրամաբանութիւնը եւ անձնական զանազան ծախքեր ու խորք ունեցող խնդիրները:

Հիբանանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան կողմէ հրատարակուած ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ Հիբանանի մէջ գոյութիւն ունին 2671 վարժարաններ, որոնք բաժնուած են երկրորդական եւ նախակրթարանի ուսման համաձայն: Ըստ այդ տուեալներուն, վարժարաններուն 1335ը պետական են, 959ը՝ սեփական, իսկ 377ն՝ սեփական բայց անվճար: Կատարուած վիճակագրութիւնը ցոյց տուած է, թէ դպրոցականներուն 39 առ հարիւրը կը յաճախէ պետական վարժարաններ, 12,5 առ հարիւրը՝ անվճար, իսկ 48,5 առ հարիւրը՝ սեփական վարժարաններ:

Շատեր կը նախընտրեն սեփական վարժարանները, ուրիշներ՝ պետականները, իսկ կան ոմանք, որոնք իրենք եւս չեն գիտեր, թէ ի՞նչ կ'ուզեն կամ ո՞ւր կը նախընտրեն ուղարկել իրենց զաւակները: Իւրաքանչիւր իր կարելիութեան եւ համոզումներուն համաձայն կ'ընտրէ վարժարան մը եւ կը շտապէ իր միջոցներով գաւազը հոն արձանագրել:

Գառն իրողութիւն է, որ այսօր իբրանանեան իրականութեան մէջ կան երկու ծայրայեղ խաւեր: Անոնցմէ մէկը առանց որեւէ տատամտումի կամ մտմտութի իր զաւակը կ'արձանագրէ բաւական սուղ, տարեկան մինչեւ 6 - 7 հազար տոլարի կրթաթղթակ պահանջող վարժարան մը, որովհետեւ անոնց համար գումարը չէ հարցը, այլ լաւ համբաւ ունեցող ու, ըստ իրենց, «քաղաքակիրթ մարդ» պատրաստող դպրոցը: Ասոր կողքին կայ նաեւ այլ դասակարգ մը, որ կ'ուզէ իր զաւակներուն կրթութիւն պահանջել՝ առանց երկար մտածելու, թէ ո՞ր վարժարանը աւելի լաւ ու յարմար է: Ընդհանրապէս այս խաւին պատկանող ծնողները իրենց մտահոգութիւններն ու հարցերը կը բաժնեն դպրոցներու տնօրէնութեան հետ, սրբապիտակ միասին յարմար լուծում մը գտնեն ու միջին եզրով մը կարենան իրենց զաւակին կրթութիւնը պահանջել:

«Ոչ մէկ աշակերտ դպրոցէն եւ նախակրթութեան գրկելու» քաղաքականութեամբ գործող վարժարաններուն մէջ այս պարագաները շատ աւելի են, քան

Պատրաստեց՝ ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ
Շաբ.՝ էջ 8



ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ Առողջ Մնայու Գաղտնիքները

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԻ ՈՒՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԶԱՓԱՒՈՐ ՔԱՆԱԿԸ (ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐԸ)

ՊՐՈՔՈՒՑ

Մէկ գաւաթ պրոքուրին մէջ գտնուող Մէկենսանիւթը բաւարար է ամբողջ օրուան մը համար: Պրոքուրին կը պատկանի կաղամբի ընտանիքին, որ մեծ դեր կը կատարէ քաղցկեղի վտանգին նուազեցման մէջ: Պրոքուրին նաեւ իր մէջ կը պարունակէ տարբեր ինտոյներ, որոնք էսքրոթէն հորմոններու դեր կը կատարեն եւ կը պաշտպանեն կիները կուրծքի քաղցկեղէ: Գաւաթ մը խաշած պրոքուրին կը բաղկանայ քսանութ քալորի:

ՍՈՒՆԸ

Սոխը կը պատկանի սխտորի ընտանիքին: Ըստ ուսումնասիրութիւններուն, սոխը կրնայ նուազեցնել արեան ճարպիկն եւ շաքարին քանակը: Ան նաեւ կը

նուազեցնէ արեան ճնշումի աստիճանը: Պատմութեան մէջ սոխը ճանչցուած է իբրեւ բուժիչ դեղ ազմայի եւ յօդացաւ: Ան նաեւ մեծ դեր կը կատարէ քաղցկեղի վտանգը նուազեցնելու մէջ: Հարիւր կրամ սոխը հաւասար է երեսունինը քալորի: Չանագան տեսակի անհանգստութիւններու համար բուժիչ դեղ է սոխը, ինչպէս՝ փորձատուութեան, պնդութեան եւ պաքթերիաներու ու մակրոյծնեան դէմ: Սոխը մարմինը աշխուժ կը պահէ:

ՍՏԵՊԻՆԸ

Օրական երկու ստեպօղի ուտելը բաւարար է Ա. կենսանիւթի եւ պեքթարոքէնի օրուան պահանջը բաւարարելու համար: Երկար ժամանակի վրայ ստեպօղիի սպառումը կրնայ պաշտպանել թոքերու քաղցկեղի վտանգէն: Հարիւր կրամ ստեպօղիին հաւասար է քառասունհինգ քալորի:

ԿԱՆԿԱՌԸ

Հարիւր կրամ կանկա-

նը հաւասար է եօթանասունվեց քալորի: Հարուստ է բնածելով եւ ֆրիբրոզ շաքարով, որոնք կ'օգնեն աղիքներուն անհրաժեշտ պաքթերիաներու աճման: Կանկառի տերեւները վտանգը նուազեցնելու մարդը կը մաքրեն թոյներէ, հետեւաբար կը նուազեցնեն մարմինի քոլեսթերոլի քանակը:

ՇՆԵՐԵԿ

Հարիւր կրամ ծնեբեր հաւասար է տասներեք քալորի: Հարուստ է փրոքթինով, ֆոլիք կենսանիւթով, ռիպոֆլաւինով եւ Մէ. կենսանիւթով: Պատմութեան մէջ ծնեբերը կ'օգտագործուէր յօդացաւերու բուժման մէջ: Ծնեբերին մէջ գտնուող բնածելները կ'օգնեն մարսողութեան: Նախընտրելի է թարմ ծնեբերի սպառելը:

ՍՄԲՈՒԿԸ

Սմբուկը արեան ճարպիկն քանակը կը նուազեցնէ եւ մարսողութիւնը կը դիւրացնէ:

ՍԵՏՈՐԸ

Հարիւր կրամ սխտորը հաւասար է իննսուն ութ քալորի: Սօսուորապէս հինգ հազար տարիներէ ի վեր սխտորը կը ներկայացուի իբրեւ բուժիչ դեղ՝ զանազան հիւանդութիւններու: Ան կը նուազեցնէ արեան քոլեսթերոլի եւ շաքարի քանակը, արեան բարձր ճնշումը կը նուազեցնէ, կ'օգնէ թրեան մէջ գտնուող արտաբերող բջիջներու, մարմինի դիմադրողականութիւնը կ'աւելցնէ եւ զայն կը պաշտպանէ քաղցկեղի հիւանդութեանէ: Մանրէներու դէմ ան մեծ ազդեցութիւն ունի եւ կարող է բերակներու պրկումը:

ԱԶԱՏՔԵՂԸ

Հարիւր կրամ ազատքեղը հաւասար է երեսունչորս քալորի: Ազատքեղը արեան ճնշումը կը բարելաւէ, կ'օգնէ արեան մէջ գտնուող թոյները չէզոքացնելու, քաղցկեղի հիւանդութեանէն կը



պաշտպանէ եւ աշխուժ կը կը պահէ մարմինը: Ազատքեղը միզեցնող բանջարեղէն մըն է:

ՇՈՄԻՆԸ

Հարիւր կրամ շոմինը հաւասար է քսանմէկ քալորի: Ըստ ուսումնասիրութիւններու, շաքար թերեւ-չորս անգամ շոմին ուտելը աչքերը կը պաշտպանէ տեսողութեան հարցերէ: Շոմինին մէջ գտնուող քլորոֆիլը կը գործադրէ արիւնը եւ մարմինը կը պաշտպանէ քաղցկեղէն:

ԼՈՒԻԿԸ

Հարիւր կրամ լուիկը հաւասար է տասներեք քալորի: Լուիկը հարուստ է Մէ. եւ Իօ. կենսանիւթերով, փոքրաքանակով կ'աւելցնէ սպառումն մէջ կը պարունակէ նաեւ երկաթ ու Մէ. եւ Պէ. կենսանիւթերը:

ԲԱՐԱ ԵԱՐՏՈՒՄԵԱՆ



Կնոջական

ԱՅԼԱԶԱՆ

ՀԵՐՐԻՒՆՆԵՐՆԵՐԻ ՍԱՅԱՆԱՅԻՆ ՈՒՂԻՈՎ



Սօրը մահեն չափազանց ցնցուած Շերիին այսօր որոշած է վերապրեցնել անոր յիշատակը

Տայանա իշխանուհիին կրտսեր որդին՝ Հերրի վերջերս նշեց իր 18րդ տարեդարձը: Այս առիթով ան հարցազրույց մը ունեցաւ «Փրէս Էստիմէյշըն»-ի հետ եւ առաջին անգամ ըլլալով հանրութեան առջեւ խօսեցաւ իր մօրը մասին:

«Ան բոլորէն աւելի խելացի էր, ան մարդոց մօտիկ էր եւ նուիրուած էր բարեսիրական նպատակներու», ըսաւ Հերրի եւ աւելցուց, որ կ'ուզէ շարունակել այն, ինչ որ իր մայրը չկրցաւ ամբողջացնել:

ԼԱԼԼԱ ՍԱԼՄԱՅԻ ԱՌԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՐԵՒՈՒՄԸ

18 Սեպտեմբերին Մարտին մէջ տեղի ունեցաւ Մարաքէշի շարժապատկերի



միջազգային փառատօնը, հովանաւորութեամբ Մոհամէտ Զ. Թագաւորին:

Փառատօնին իրենց մասնակցութիւնը բերին եօթներորդ արուեստի սաստիկը եւ այլ անձնաւորութիւններ, ինչպէս՝ Քարմին Տէօնկօվ, Ֆրանսիս Ֆորտ Քոփուա, Ժանն Մորրօ, Տէյվիտ Լինչ եւ ուրիշներ:

Փառատօնին բացման արարողութեան բոլոր լուսարձակները կեդրոնացան Սալմա Թագուհիին վրայ, որ կը փայլէր իր չքեղ հագուածքով եւ ճաշակով:

Երեկոյեան հիւրերուն ի պատիւ տրուած ճաշկերոյթին Լալլա Սալմա դարձաւ իր ներկայութեամբ շուքի մէջ ձգեց եօթներորդ արուեստի շատ մը ստեղծեր:

Անցեալ Մայիսէն՝ ամուսնութենէն ի վեր ափիկա անոր առաջին պաշտօնական երեւումն էր:

ԱՇԽԱՐՀԻ ԳԵՂԵՅՎՈՒՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Յառաջիկայ 30 Հոկտեմբերին Նիկերիոյ մայրաքաղաքին մէջ տեղի պիտի ունենայ աշխարհի 2002ի գեղեցկուհի ընտրութիւնը:



Այս առիթով եւրոպական կարգ մը պետութիւններ, որոնց կարգին՝ Ֆրանսա եւ Պելճիքա, կը սպառնան չմասնակցել ընտրութեան, տրուած ըլլալով, որ Նիկերիոյ իսլամական մէկ ատենը քարկոծուածով մահազմեց արձակած է երկու կիներու եւ տղամարդու մը դէմ:

Աշխարհի 2001ի գեղեցկուհի Նիկերիացի Աժպանի Տարիկօ կը մերժէ հետեւի եւրոպական երկիրներու որոշումին՝ ըսելով. «Կը ցաւիմ... չեմ ուզեր որեւէ մեկնարանութիւն կատարել»:


Ներկայիս աշխարհի գեղեցկուհի՝ Աժպանի Տարիկօ

Հարսանեկան Քարտերու Ընդհանուր Հարաբերակ

Հարպոյեան Կեդրոն - Պ. Լամուտ
Հեռ.՝ 01-253008

ՎԵՐԱՍՈՒՄԻ Է ԱՐԴԵՆ

5 ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ



Վերամուտը միշտ այդպէս է նախակրթարանի աշակերտներուն համար: Անոնք երկար արձակուրդէ մը վերադարձած՝ դարձեալ պիտի կաղապարուին եւ աշխատանքի լծուին: Անոնցմէ կ'ազնային աշխատանք, ճիգ եւ լաւ արդիւնքներ. ծնողներուն կը մնայ օգնել գաւկին, անոր նեցուկ կանգնել՝ դպրոցական յաջող տարեշրջան մը բոլորելու համար:

Այս առիթով կու տանք մանկավարժ եւ հոգեբան մասնագէտի մը 5 պատուիրանները:

1) Երեխային վստահեցնել, որ ան պիտի յա-

ջողի. շատ կարեւոր է դժուար է նախակրթարանի աշակերտներուն ներշնչելը, թէ ան կարող անձ մըն է եւ աշխատանքով տեղ պիտի հասնի:

2) Ներկայ գտնուել ծնողական ժողովներուն, յատկապէս՝ վերամուտին յաջողող առատանք, ճիգ եւ լաւ արդիւնքներ. ծնողներուն կը մնայ օգնել գաւկին, անոր նեցուկ կանգնել՝ դպրոցական յաջող տարեշրջան մը բոլորելու համար:

3) Օգնել, որ ան ինքնարաւ ըլլայ, եւ քաջայե-

4) Հետաքրքրուել երեխային աշխատանքով, օրական ստուգել անոր տետրակները, գնահատել անոր նիշերը: Ստուգել նաեւ, որ դիրք ու տետրակ չմոռնայ, եւ ստորագրել անոր գրաւոր թուղթերը:

5) Հսկել երեխային առողջութեան, քունին, սննդառութեան, բայց նաեւ՝ դադարի եւ գոտարձութեան առիթ տալ եւ քաջալերել, որ արտադպրոցական հետաքրքրութիւններ ունենայ եւ հետեւի ակումբի մը կամ մշակութային կեդրոնի մը գործունէութեան:

ՋԱՒԱՍՔԻ ՄԵԾ...

Շարունակուած՝ 5րդ էջէն

ԽՆՁՈՐՈՎ ԱՆՈՒՇԵՂԵՆ



- Բաղադրութիւն՝ 8 անձի համար
- Ծրար մը փաթ ֆետլըքէ խմոր (հանրախանութէն)
 - 50 կրամ մանրուած կաղին
 - 50 կրամ մանրուած ընկոյզ
 - 50 կրամ չամիչ
 - 4էս լիթր սեր
 - Մէկ քիլօ խնձոր
 - Մէկ թէյի դգալ փոշի կասիա
 - 80 կրամ շաքար
 - 50 կրամ կարագ

Պատրաստութիւն
Կաղինը եւ ընկոյզը դարձնել տաք կարագին մէջ, աւելցնել չամիչը, մանրուած խնձորը, շաքարը եւ կասիան:

Կրակին վրայէն հանել եւ աւելցնել 3 ապուրի դգալ սերը, միասին խառնել եւ ստացուած խառնուրդը տարածել բացուած խմորին երկայնքին, ապա ուրեւի՛ ստանալու համար կոճղի ձեւով խմոր մը:

Խմորը փոխադրել փիսէի մը մէջ եւ եփել միջակ ջերմաստիճանով, շուրջ մէկ ժամ:
Փուռէն հանելէ ետք երեսը քիչ մը կարագ քսել եւ վրան փոշի շաքար ցանել եւ գարդարել ընկոյզով կամ կաղինով:

Աւելցած սերը հրամցնել անուշեղէնին կողքին:

«ԱԶԳԱԿ»-Ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻՒՆԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն. 258526, 260115 եւ 241274:

ԳԵՂԵՅՎԱԳԻՏԱԿԱՆ

ՏՈՒՆԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԴԷՄՔԻ ԾԵՓՈՒԿՆԵՐ

Ամէն անգամ որ ձեր մորթը իւղոտի, չորնայ, տփուկի կամ յոգնութեան նշաններ ցոյց տայ, մտածեցէ՛ք դէմքի ծեփուկի մը մասին, զոր կարենաք արագօրէն պատրաստել տունը:

Սակայն, յիշեցնենք, որ նախքան ծեփուկին պատրաստութիւնը պէտք է շատ լաւ օճառուիք եւ գործածէք նախընտրաբար ապակեայ հականեխուած անօթներ: Ինչ կը վերաբերի ծեփուկին, խուսափեցէ՛ք մեծաքանակ պատրաստութենէն եւ զայն գործածեցէ՛ք անմիջապէս, իսկ մնացեալը առանց վարանելու թափեցէ՛ք:

ԴԷՄՔԻՆ ՓՈՅԼԸ ՏՈՒՈՂ ԾԵՓՈՒԿՆԵՐ

• **ԹԱՐՄ ՍԵՐՈՎ ԾԵՓՈՒԿ**
Խոշոր ապուրի դգալ մը թարմ սերը պատառաքողով գարկէք, աւելցուցէ՛ք նոյն քանակութեամբ մեղր եւ քանի մը կաթիլ կիտրոնի հիւթ:
Վրձինով մը ծեփուկը տարածեցէ՛ք մաքուր դէմքին վրայ, քառորդ ժամ պահեցէ՛ք, ապա գաղջ ջուրով լուացէ՛ք:

• **ՎԱՐՈՒՆԳՈՎ ԾԵՓՈՒԿ**
Չկողմը ծեփուկը կլոր շերտերու վերածեցէ՛ք եւ տեղաւորեցէ՛ք ձեր դէմքին եւ վիզին վրայ: Տասը վայրկեան ետք վարունգներուն միւս երեսը դարձուցէ՛ք եւ կրկին տասը վայրկեան սպասեցէ՛ք, ապա հանքային ջուրով սրբեցէ՛ք ձեր դէմքն ու վիզը:

• **ՁԻԹԱԻՒՂՈՎ ԾԵՓՈՒԿ**
Հաւկիթի դեղնուց մը ձիթախիւղին հետ պատառաքողով մը գարկէք, մայրցեղի նման նիւթ մը ստանալու համար: Ծեփուկը տարածեցէ՛ք ձեր դէմքին եւ վիզին վրայ, 20 վայրկեան ետք ցողուեցէ՛ք գաղջ ջուրով:

ՉՈՐ ՄՈՐԹԻ ՅԱՏՈՒԿ ԾԵՓՈՒԿՆԵՐ

• **ՍՏԵՊՂԻՆՈՎ ԾԵՓՈՒԿ**
Ստեպղինը քերոցէ անցուցէ՛ք, ապա խառնեցէ՛ք հաւկիթի մը դեղնուցին եւ աւելցուցէ՛ք ապուրի դգալ մը թարմ սեր եւ նոյնքան ձիթախիւղ:
Խառնուրդը վրձինով մը տարածեցէ՛ք դէմքին եւ վիզին վրայ, 20 վայրկեան ետք ցողուեցէ՛ք գաղջ ջուրով:

• **ԱԻՈՔԱՏՈՑՈՎ ԾԵՓՈՒԿ**
Հասուն կէս աւաքաւոր մը ճգմեցէ՛ք պատառաքողով, աւելցուցէ՛ք դգալ մը հեղուկ մեղր եւ քանի մը կաթիլ կիտրոնի հիւթ:
Ծեփուկը տարածեցէ՛ք դէմքին եւ վիզին վրայ, նոյնիսկ՝ աչքերուն շուրջը: քառորդ ժամ ետք առատօրէն ցողուեցէ՛ք գաղջ ջուրով:

• **ՀՆԴԿԸՆԿՈՑՁԻ ԿԱԹՈՎ ԾԵՓՈՒԿ**
Օգտագործեցէ՛ք միայն հնդկընկոյզին կաթը՝ աւելցնելով նոյնքան հեղուկ մեղր: Այս խառնուրդով օծեցէ՛ք ձեր դէմքը:

ԴԷՄՔԸ ՍԱՔՐՈՂ ԾԵՓՈՒԿՆԵՐ

• **ՍԻՍԵՌՈՎ ԾԵՓՈՒԿ**
Սուրճի գաւաթ մը սիսեռ շատ լաւ խաշել, կեղուել եւ պատառաքողով ճգմել, աւելցնել ապուրի դգալ մը մածուն եւ կէս կիտրոնի հիւթ:
Ծեփուկը տարածեցէ՛ք դէմքին եւ վիզին վրայ: Քսան վայրկեան ետք ցողուեցէ՛ք մորթին վրայ, 10 վայրկեան ետք ցողուեցէ՛ք:

• **ԱՆԱՆՈՒՆՈՎ ԾԵՓՈՒԿ**
Ափ մը թարմ անանուխը դնել միքսըրի մէջ, աւելցընել շերտ մը ճերմակ պանիր, հաւկիթի դեղնուց մը եւ սուրճի դգալ մը ձիթախիւղ:
Խառնուրդը տարածեցէ՛ք մորթին վրայ, 10 վայրկեան ետք ցողուեցէ՛ք:

• **ՀԱԿԻԹԻ ԶԵՐՄՎՈՒՑՈՎ ԾԵՓՈՒԿ**
Հաւկիթի ճերմակուց մը գարկէք մեղրի հետ. երբ փրփրոտ խառնուրդ մը ստանաք, զայն տարածեցէ՛ք միմիայն ճակտին, քիթին եւ կզակին վրայ: Ձգեցէ՛ք 20 վայրկեան, ապա ցողուեցէ՛ք:

ԴԷՄՔԸ ԵՐԻՏԱՍԱՐԳԱՅՆՈՎ ԾԵՓՈՒԿՆԵՐ

• **ՍՈՑԱՅՈՎ ԾԵՓՈՒԿ**
Ապուրի դգալ մը փոշի սոյային աւելցուցէ՛ք շերտ մը ճերմակ պանիր եւ ապուրի դգալ մը քաւսիայի մեղր: Լաւ խառնեցէ՛ք եւ միտաարը նիւթ մը ստանալէ ետք՝ գայն դէմքին վրայ տարածեցէ՛ք: քառորդ ժամ ետք գաղջ ջուրով ցողուեցէ՛ք:

• **ՍԱՄՈՒՆՈՎ ԾԵՓՈՒԿ**
Ապուրի դգալ մը մածունը խառնեցէ՛ք 5 ելակի հիւթին հետ: Խառնուրդը առաւելաբար քսեցէ՛ք այտերուն եւ վիզին: Քառորդ ժամ ետք առատօրէն ցողուեցէ՛ք:

Պատրաստեց՝
ՇՈՒՇԻԿ ՍԱԻՍԱԳԱԼԵԱՆ

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
«Ն. ԱՂԱՍԵԱՆ»
ՄԱՍՆԱՃԻՒՂ
ՀԱՅԿԱԿԱՆ
ՏՈՒՄԻԿ ԵՐԵՒԱՅ
26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2002

Մ Ա Ր Ձ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԿԸ ՅՍՏԱԿԱՅՆԷ ԿԱՐԳ ՄԸ ՀԱՐՑԵՐ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան շաբաթավերջին հարցազրոյցի մը ընթացքին ճշդեց կարգ մը հարցեր, որոնք կը մնային անորոշ, ինչ որ անհիմն տարածայնութիւններու առիթ կու տար:

Նախարար Յովնանեան առաջին հերթին ըսաւ, թէ իր նախարարութեան եւ Ոլիմպիական յանձնարարութեան միջև ոչ մէկ հարց գոյութիւն ունի: Նոյնիսկ եթէ կը գտնուին երբեմն տարբեր կարծիքներ, անոնք լուծման ընթացքին մէջ են:

Անդրադառնալով ժիւտոյի եւ փինկ փոնկի ֆետերասիոններուն ընտրութիւններուն, նախարար Յովնանեան ըսաւ, թէ ինք ոչ մէկ ձեւով միջամուտ եղած է անոնց, այլ ձգած է, որ անոնք հեզասահ ձեւով ընթանան:

Ինտիանափոխի մէջ (Մ. Ն.) տեղի ունեցած պատեթիօնի աշխարհի ախոյեանութեան մրցումներուն անդրադառնալով, նախարար Յովնանեան ըսաւ, թէ առաջին հերթին Լիբանան մեծ իրագործում մը կատարեց մրցաշարքին մասնակցելով: Սակայն, ան ըսաւ, թէ պատեթիօնի ֆետերասիոնը գործեց սխալներ, երբ կարգ մը մարզիկներու առիթ տուաւ, որ իրենց կիներուն ընկերակցութեամբ մեկնին Միացեալ Նահանգներ, ինչ որ սխալ քայլ մըն էր: Մարզիչ ձոն Նիւմընի պաշտօնագրի մասին անգրադառնալով, նախարար Յովնանեան ըսաւ, որ այդ մէկը պէտք էր աւելի կանոնաւ ըլլար, որովհետեւ բոլոր մարզիկներն ալ դժգոհ էին անկէ:

Նախարար Յովնանեան եզրափակեց ըսելով, որ մինչեւ տարեվերջ բոլոր հարցերը պէտք է լուծուած ըլլան:

ՖՈՐՄԱՒԵԼԱ 1

2003Ի ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Ֆորմիւլա 1ի Միջազգային Ֆետերասիոնը, հրապարակեց 2003ի Ֆորմիւլա 1ի աշխարհի ախոյեանութեան մրցումներուն յայտագիրը, որ այս տարուան նման կը սկսի Աւստրալիային եւ Կալիֆորնիայի մէջ:

Միակ տարբերութիւնը պիտի ըլլայ այն, որ անիկա պարպակէ վեց օր ուշացումով կը սկսի, նկատի ունենալով, որ այս տարի անիկա սկսած էր Մարտ 3ին, մինչ 2003ին պիտի սկսի Մարտ 9ին:

Ստորեւ՝ 17 կրան փրիներուն յայտագիրը.

- Մարտ 9.- Աւստրալիա (Մելբուռն)
- Մարտ 23.- Մալեզիա (Սեփանկ)
- Ապրիլ 6.- Պրայի (Սան Փաուլօ)
- Ապրիլ 20.- Սան Մարինօ (Ինոլա)
- Մայիս 4.- Սպանիա (Պարսելոնա)
- Մայիս 18.- Աւստրիա (Սփիլլըրլ)
- Յունիս 1.- Մոնաքօ (Մոնթե Բարլօ)
- Յունիս 15.- Քանադա (Մոնրէալ)
- Յունիս 29.- Եւրոպա (Նիւլեյրպուրկրինկ, Գերմանիա)
- Յուլիս 6.- Ֆրանսա (Մանի - Քուր)
- Յուլիս 20.- Բրիտանիա (Սիվլըրսթոն)
- Օգոստոս 3.- Գերմանիա (Հոքենհայմ)
- Օգոստոս 24.- Հունգարիա (Հունկարոբինկ)
- Օգոստոս 31.- Պելճիքա (Սփա - Ֆրանքօքէմփ)
- Սեպտեմբեր 14.- Իտալիա (Մոնպա)
- Սեպտեմբեր 28.- Մ. Ն. (Ինտիանափոխի)
- Հոկտեմբեր 12.- Ճափոն (Սուլոքա)

ONE SECOND IS ENOUGH... Արագը Կը Պատահէ Երկուսրոնի Մը Մէջ...

...BUT WE USE THEM ALL.

...Իսկ Մեք Ներկայ Եւ Աւելի Երկուսրոնի.

ԱՖՀԻԼ AFHIL

Աֆիլ-ի Եւրո, Ք. Յարկ, Գեո. Եւ Յարկ. (01) 262231-242556-242557
 Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

«ՉԵՄՓԻԸՆՉ ԼԻԿ»

ԼԻՎՈՐՓՈՒԼ ԵՒ ԼԻՈՆ՝ ՅԱՂԹԱԿԱՆ

«ՉԵՄՓԻԸՆՉ ԼԻԿ»ի Ա. հասարակական մրցումներուն, երէկ տեղի ունեցան ութ ճակատումներ՝ Ա., Բ., Գ. եւ Դ. խմբակներին ներս, որոնցմով ամբողջացան երթի մրցումները, նկատի ունենալով որ մրցաշարքին մասնակցող 32 խումբերն ալ կատարած եղան երեքական մրցում:

Երէկուան մրցումներուն, մեծագոյն յաղթանակը եղաւ Լիվըրփուլ, որ իր դաշտին վրայ՝ «Էնֆիլտ»ի մէջ 5-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց իր հիւրը՝ Սպարտակ Մոսկուան, արձանագրելով մրցաշարքի իր առաջին յաղթանակը: Աւելի քան 40 հազար համակիրներու ներկայութեան, Էմիլ Հէսքի (7րդ եւ 88րդ), Պրիւսօ Շէյրու (14րդ), Սէմի Հիփիա (28րդ) եւ Սալիֆ Տիւսօ (81րդ) նշանակեցին անգլիական կապիտանի հինգ անպատասխան կոլերը:

Վալենսիա եւ Արսենալ արձանագրեցին իրենց երրորդ յաջողակ կոլերը, որոնք իրենց յաղթանակը պարտութեան մատնելով Պարսել (6-2) եւ Օքսֆորդ (1-0):

«Ման Սիթի»ի մէջ, Ինթեր Միլան 2-1 արդիւնքով պարտուեցաւ Լիոնին: Սիտնի Կովու (21րդ) եւ Սոնի Անտերսոն (60րդ) նշանակեցին ֆրանսական կապիտանի կոլերը, իսկ Ֆապիօ Բանաւան Կապիտանի կոլերը, որ Ինթերի կողմէն (73րդ):

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

Ա. ԽՄԲԱԿ
Փ. Ս. Վ. Այնտիլդըն - Պորուսիա Տորքմունտ 1-3
Օքսֆորդ - Արսենալ 0-1

Բ. ԽՄԲԱԿ
Լիվըրփուլ - Սպարտակ Մոսկուա 5-0
Վալենսիա - Պարսել 6-2

Գ. ԽՄԲԱԿ
Ալթա Աթլետիկ - Ռեալ Մատրիտ 3-3
Կէնք - Ա. Էս. Ռոմա 0-1

Դ. ԽՄԲԱԿ
Ինթեր Միլան - Լիոն 1-2
Ռոզենպորկ - Ալքար Ամսթերտամ 0-0

Ստորեւ՝ դասաւորումը.

Ա. ԽՄԲԱԿ	Յաղ. Զաւ.	Պարտ.	Կէտ
1.- Արսենալ	3	0	0 9
2.- Պոր. Տորքմունտ	2	0	1 6
3.- Օքսֆոր	1	1	2 1
4.- Այնտիլդըն	0	1	2 1

Բ. ԽՄԲԱԿ	Յաղ.	Պարտ.	Կէտ
1.- Վալենսիա	3	0	0 9
2.- Պարսել	1	1	1 4
3.- Լիվըրփուլ	1	1	1 4
4.- Սպարտակ Մոսկուա	0	0	3 0

Գ. ԽՄԲԱԿ	Յաղ.	Պարտ.	Կէտ
1.- Ռեալ Մատրիտ	2	1	0 7
2.- Ա. Էս. Ռոմա	1	1	1 4
3.- Ալթա Աթլետիկ	0	3	0 3
4.- Կէնք	0	1	2 1

Դ. ԽՄԲԱԿ	Յաղ.	Պարտ.	Կէտ
1.- Լիոն	2	0	1 6
2.- Ինթեր Միլան	1	1	1 4
3.- Ալքար Ամսթերտամ	1	1	1 4
4.- Ռոզենպորկ	0	2	1 2

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.

ՀԵՐԹԱ ՊԵՐԼԻՆ ԱՆՅԱԻ Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի մրցաշարքին Ա. հասարակական մրցումներուն, Հերթա Պերլին իր դաշտին վրայ 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ալքարտինը, ապահովեց Բ. հանգրուանին իր տոմարը: Գերմանական կապիտան մրցումին միակ կոլը նշանակեց աւստրիացի մէկ վայրկեան առաջ, շնորհիւ՝ Միքայէլ Փրիցի: Երթի մրցումը, անոնց միջեւ վերջ գտած էր 0 - 0 արդիւնքով:

Իրենց կարգին Աւստրիա Վիեննա եւ Ամիքա Վրոնքի (Լեհաստան) ապահովեցին իրենց տոմարը հակառակ առաջ, որ անոնք պարտութիւններ կրեցին իրենց մրցակիցներին: Աւստրիա Վիեննա պարտուեցաւ 1 - 0 արդիւնքով Շախար Տոնէթցքին (Ռուքանիա), իսկ Վրոնքի՝ Սերվէթին (2-1): Երթին Աւստրիական կապիտան արձանագրած էր 5 - 1 արդիւնքով յաղթանակ մը, իսկ Ամիքա՝ 3-2 արդիւնքով յաղթանակ մը:

Ստորեւ՝ այսօրուան կարգ մը կարեւորագոյն մրցումներուն յայտագիրը (փակագիծի մէջ նշուած են երթի մրցումներուն արդիւնքները).

- Փարթիպան Պելլարատ - Սփորթինկ Լիպպոն (3-1)
- Փարմա - Մոսկուա ի Բանակայիներ (1-1)
- Սթապաէթ - Անտրլիքս (1-0)
- Հիլենվին - Նախիւնայ Պուրթեշ (0-3)
- Պուաիլիպ - Մարպպի Թէլ Ալի (0-1)
- Լորիան - Տենիպիլիփոր (0-2)
- Ռէյնօրթ - Վիքթորիա Զիպրով (0-2)
- Մայակա - Սարաեւո (0-0)
- Քիւրու Վերոնա - «Կարմիր Ստոր» Պելլարատ (0-0)
- Վերտըր Պրեմըն - Մեթալուրկ Տոնէթցք (2-2)
- Սոֆիալի Բանակա-

յիններ - Պելլարպոն (1-1)

ԼԻՎՈՐԱՆԵԱՆ ՊԱՏԲԵՌՊՈԼ

ՆՈՐ ԵՂԱՆԱԿԻ ՕՏԱՐ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

Լիբանանի պատեթիօնի ֆետերասիոնը, իր վերջին ժողովին յայտարարեց «օտար» մարզիկներուն անուանելը, որոնք 2002 - 2003 եղանակին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Ա. դասակարգի մրցումներուն: Տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան իրենց մասնակցութիւնը պիտի բերեն տարբեր խումբեր, սակայն այս եղանակին աւարտին անոնց թիւը պիտի նուազի ութի:

Ստորեւ՝ տարբեր խումբերուն օտարականները.
ՍԱԺԷՍ - Էրիք Շաթֆիլտ (Մ. Ն.), Ճօ Սթիւրնս (Մ. Ն.) եւ Գեւին Ճոնֆիթի (Քանադա)
ՌԻԱՏԻ - Ճիմի Ուաթսը (Մ. Ն.), Օրիլըն Քասթրո (Մ. Ն.) եւ Ճոն Լիւս Նուզու (Նիկերիա)
ՇԱՆՎԻԼ - Անթոնիօ Մետիսըն (Մ. Ն.), Իսմայիլ Մուսլիմ (Եգիպտոս) եւ Լամին Տիաուարա (Մալի)
ԱՆԻՊԱԼ - Էտի Ուալիսըն (Մ. Ն.), Թոմ Պրիլըն (Մ. Ն.) եւ Պրոնիթիա Մաթիլուտըր (Մ. Ն.)
ՍԱՏԱՔԱ - Ժամալ Քանտրիք (Մ. Ն.), Տելըն Լալք (Մ. Ն.) եւ Լորենզօ Հոլ (Մ. Ն.)
ԱՆԴՐԱՆԻԿ - Օրլանտօ Լայթֆոլք (Մ. Ն.), Ռոնի Ուալիսըն (Մ. Ն.) եւ Թաճուտին Սուսույա (Նիկերիա)

ՊԼՈՒ ՍԺԱՐԶ - Կրեկորի Լաքի (Մ. Ն.), Անթոնիօ Կրանթ (Մ. Ն.) եւ Շանտո Սուրիլի (Մ. Ն.)

ՍԱՆԹՐԱԼ - Ուիլիլմ Պուրանըն (Մ. Ն.), Իսհաք Սորիս (Մ. Ն.) եւ Ատանի Ուիլիլմ (Փամալքա)

ՂԱԶԻՐ - Լաթիս Ուիլիլմ (Մ. Ն.) եւ Իպրահիմ Թաթ (Նիկերիա)

ԲԱԶԻՐԱՊԱ - Էրիք Տան (Մ. Ն.), Տիմիթրիոս Պուլզ (Մ. Ն.) եւ Տէմիլըն Մաքսուլին (Մ. Ն.)

Իսկ աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն, օտարականները պէտք է նկատի ունենալ հետեւեալ ձեւով.

Չարուհի Ալեքսանեան (Հայաստան) միացաւ Անդրանիկի, Էրենարա Սրապիլեա (Ռուսիա)՝ Սատաքալի, իսկ Աննա Մամիկոնեան (Հայաստան)՝ Հ.Մ.Ը.Մ.Ի. Ստորեւ՝ ախոյեանութեան մրցումներուն սկսելիք թուականները.

ՏՂԱԸ
Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումները կը սկսին 16 Նոյեմբերին, Բ. դասակարգի մրցումները՝ 17 Նոյեմբերին:

ՊԳՁԻԿՆԵՐ

Ա. դասակարգի մրցումները կը սկսին 16 Նոյեմբերին, իսկ Բ. դասակարգի մրցումները՝ դարձեալ նոյն օրը:

Ֆետերասիոնը յայտնեց նաեւ, թէ դարձի մրցումներուն աւարտին եւ ֆայնըլ սիքսի մրցումներէն առաջ տեղի պիտի ունենայ Լիբանանի տղոց եւ աղջկանց բաժակի մրցաշարքը: Իւրաքանչիւր խումբի համար մասնակցութեան գին ճշդուած է հինգ հարիւր հազար լիբանանեան ոսկի: Առաջին դիրքը գրաւողը կը ստանայ 10 հազար ամերիկեան տոլար, 2րդը՝ 7 հազար տոլար, 3րդը՝ 5 հազար տոլար եւ վերջապէս 4րդը՝ 3 հազար տոլար:

16 ՀՈՎՏԵՄԵՐԻՆ՝ ՅՈՒՆԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ ՖՈՒԹՊՈԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ



Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբին վերջին լուսանկարը

Եւրօ - 2004ի պտու մի մրցումներուն, Հոկտեմբեր 16ին Արեւիքի մէջ տեղի պիտի ունենայ Յունաստան - Հայաստան մրցումը, որ ֆուտպոլի աշխարհին մէջ պիտի ըլլայ պատմական հանդիպում մը, որովհետեւ անիկա պաշտօնական առաջին հանդիպումն է երկու երկրներուն միջեւ:

Յաջորդ օրը տեղի պիտի ունենայ սպասուած պատմական մրցումը, որմէ անմիջապէս ետք հայրենի մարզիկները նոյն «չարթըր»ով պիտի վերադառնան հայրենիք:

Յաջորդ օրը տեղի պիտի ունենայ սպասուած պատմական մրցումը, որմէ անմիջապէս ետք հայրենի մարզիկները նոյն «չարթըր»ով պիտի վերադառնան հայրենիք:

